



Atlantic Health System

Վարչական քաղաքականության

Թեմա՝ Ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ թերի ապահովագրություն ունեցող հիվանդներին տրամադրվող ֆինանսական օժանդակություն

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01/01/2021 թ.

Նախկին քաղաքականությունների ամսաթվերը՝ 01/01/2020 թ.

01/01/2019
01/01/2018
01/01/2017
01/01/2016
03/06/2015

Հիմնական պատասխանատվությունը՝ Տնօրեն – հիվանդ ֆինանսական ծառայություններ

I. Նպատակը՝

Ապահովել բոլոր շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության հիվանդների Atlantic Health System, Inc. (հետագայում՝ Atlantic Health System) ընկերության հիվանդանոցային հաստատություններում բժշկական ծառայություններից օգտվելը՝ անկախ նրանց վճարունակության հնարավորություններից: Այս քաղաքականությունը տարածվում է Atlantic Health System-ի հիվանդանոցների, այդ թվում՝ Morristown Medical Center, Overlook Medical Center, Chilton Medical Center, Newton Medical Center, Hackettstown Medical Center բժշկական կենտրոնների և Atlantic Rehabilitation Institute-ի վրա, ինչպես նաև Atlantic Health System-ի ցանկացած այլ հաստատության վրա, որոնք՝ համաձայն 42 C.F.R. 413.65 դաշնային օրենքի, ծառայությունների մատակարարման պարտավորություն ունեն:

II. Քաղաքականությունը՝

Atlantic Health System-ի քաղաքականությունն է՝ ապահովել բոլոր շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության հիվանդների՝ ընկերության հիվանդանոցային հաստատություններում բժշկական ծառայություններից օգտվելն, անկախ նրանց

վճարունակության հնարավորություններից: Ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է զանազան ծրագրերի միջոցով, որոնք նկարագրված են ստորև Բաժին IV-ում և նպատակաուղղված են Ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ թերի ապահովագրություն ունեցող հիվանդներին, որոնք որևէ այլ հնարավորություն չունեն ամբողջությամբ կամ մասամբ վճարել հիվանդանոցային ծախսերը: Այս քաղաքականությունը գործում է Atlantic Health System-ի առողջապահության համակարգի վերոնշյալ բոլոր բժշկական հաստատություններում և Atlantic Health System-ի ցանկացած այլ հաստատությունում, որը՝ համաձայն 42 C.F.R. 413.65 դաշնային օրենքի, ծառայությունների մատակարարման պարտավորություն ունի:

Ֆինանսական օժանդակությունը և մասնակի փոխհատուցումները տրամադրվում են միայն շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության ծառայությունների համար: Որոշ ծառայություններ՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, բուժքրոջ, անզգայացման ծառայության վճարները, ռադիոլոգիական հետազոտության արդյունքների վերծանումը և ամբուլատոր բուժման բժշկական ցուցումներն առանձին հիվանդանոցային ծախսեր են, որոնք չեն վճարվում Atlantic Health System-ի ֆինանսական օժանդակության շրջանակներում: Բոլոր այլ մատակարարները, բացի մեր հիվանդանոցային հաստատությունից, որոնք շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության ծառայություններ են մատուցում մեր բուժական հաստատությունում, նրա միջոցով, ներկայացված են Ֆինանսական օժանդակության քաղաքականության (հետագայում՝ ՖՕՔ) վճարովի և անվճար ծառայությունների ցանկում՝ նշվելով առանձին սույն ՖՕՔ-ին կից Հավելված Ա-ում: Մատակարարների ցանկ 2-ը վերանայվում և անհրաժեշտության դեպքում, թարմացվում է եռամսյակը մեկ անգամ:

III. Ընդհանուր տեղեկություններ.

- A. Atlantic Health System-ը ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ է մատուցում Նյու Ջերսիի բոլոր այն բնակիչներին, որոնք շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության կարիք ունեն՝ անկախ նրանց վճարունակության հնարավորություններից կամ անկախ նրանց ՖՕՔ ֆինանսական օժանդակություն ստանալու իրավասությունից:
- B. Atlantic Health System-ը չի կարող ներգրավվել որևէ գործողության մեջ, որն արգելք կհանդիսանա անձանց, առանց խտրականության, շտապ բժշկական օգնություն ստանալու համար, օրինակ՝ չի կարող պահանջել, որ անհետաձգելի բժշկական օգնության բաժանմունք դիմած հիվանդները վճարեն նախօրոք՝ բուժում ստանալու համար կամ թույլատրել շտապ բուժօգնության բաժանմունքում կամ այլ վայրերում պարտքերի հավաքագրում, որտեղ նման գործունեությունը կարող է խոչընդոտել անհետաձգելի օգնության մատուցմանը:

- C. Atlantic Health System-ի ՖՕՔ, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և Պարզ լեզվով ամփոփագրերը (հետագայում՝ ՊԼԱ) առցանց հասանելի են հետևյալ կայքում. <http://www.atlantichealth.org/financialassistance>
- D. Atlantic Health System-ի ՖՕՔ, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ներն առկա են անգլերենով և անգլերենի սահմանափակ իմացությամբ այն բնակչության լեզուներով, որոնց թիվը համայնքում չի գերազանցում 1,000 անձը կամ բնակչության ընդհանուր թվի 5%-ը՝ առաջնային օգնության մատակարար յուրաքանչյուր բժշկական հաստատության համար: ՖՕՔ-ի թարգմանությունները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները առկա են ՖՕՔ-ի Հավելված Բ-ում նշված բոլոր լեզուներով: Բոլոր ջանքերը կներդրվեն, որպեսզի երաշխավորվի ՖՕՔ-ի, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերի և ՊԼԱ-ների հստակ բացատրությունն այն հիվանդներին, որոնց մայրենի լեզուն ընդգրկված չէ թարգմանվող լեզուների ցանկում:
- E. ՖՕՔ-ի թղթային կրիչով պատճենները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները, ըստ պահանջի, կարող են փոստով անվճար ուղարկվել ձեզ. դրանք առկա են նաև հիվանդանոցի ողջ մասնաշենքի տարբեր հատվածներում, այդ թվում՝ ընդունարանում, շտապ օգնության բաժանմունքում, ֆինանսական խորհրդատվության ու ստորև նշված այլ կետերում. Ֆինանսական օժանդակության դիմում-հայտերը կարող են ներկայացվել անձամբ, փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Ֆինանսական խորհրդատվության գրասենյակները.

Morristown Medical Center բժշկական կենտրոն. 100 Madison Avenue, Morristown, New Jersey 07960, Financial Counseling Office, հեռ.՝ # 973-971-8964

Overlook Medical Center բժշկական կենտրոն. 99 Beauvoir Avenue, Summit, New Jersey 07901, Financial Counseling Office, հեռ.՝ # 908-522-4689

Chilton Medical Center բժշկական կենտրոն. 97 West Parkway, Pompton Plains, New Jersey 07444, Financial Counseling Office, հեռ.՝ # 973-831-5113

Newton Medical Center բժշկական կենտրոն. 175 High Street, Newton, New Jersey 07860, Financial Counseling Office, հեռ.՝ # 973-579-8407

Hackettstown Medical Center բժշկական կենտրոն. 651 Willow Grove Street, Hackettstown, New Jersey 07840, Financial Counseling Office, հեռ.՝ # 908-850-6902

Atlantic Rehabilitation Institute. 100 Madison Avenue, Morristown, New Jersey 07960, Financial Counseling Office, հեռ.՝ # 973-971-8964.

- F. Եթե հիվանդները ՖՕՔ-ի թղթային կրիչով պատճենները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները կամ այլ օգնություն ձեռք բերելու օգնության կարիք ունեն, ապա նրանք կարող են դիմել Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-619-4024 հեռախոսահամարով կամ այցելել, դիմել վերը նշված ֆինանսական խորհրդատվության գրասենյակներ:
- G. Հիվանդանոցի հանրային նշանակության տեսանելի վայրերում համապատասխան ցուցանշաններ և ուղենիշներ են տեղադրված՝ ներառյալ մուտքի ընդունարանի, շտապ օգնության և ֆինանսական խորհրդատվության բաժանմունքների տեղամասերում, որոնք հիվանդներին ծանուցում և իրազեկում են առկա ֆինանսական օժանդակության մասին:
- H. ՊԼԱ-ները՝ որպես ընդունման գործընթացի բաղկացուցիչ մաս, առաջարկվում են բոլոր հիվանդներին:
- I. Atlantic Health System-ը ֆինանսական օժանդակություն է առաջարկում բոլոր այն իրավասու հիվանդներին, որոնք շտապ կամ այլ անհետաձգելի բժշկական ծառայությունների կարիք ունեն, սակայն հնարավորություն չունեն ամբողջությամբ կամ մասամբ վճարելու դրանց համար: Այս բարեգործական նպատակին հասնելու համար, Atlantic Health System-ն իր սպասարկվող համայնքներում լայնորեն կգովազդի ՖՕՔ հավաստագրերը, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները՝ համագործակցելով տեղական սոցիալական ապահովության ծառայությունների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ:
- J. Ֆինանսական օժանդակություն ստանալու համար կարող են դիմել ինչպես հիվանդները, այնպես էլ նրանց ներկայացուցիչները: Atlantic Health System-ի աշխատակիցները կարող են հիվանդներին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկել ֆինանսական խորհրդատուների, բժիշկների կամ այլ մասնագետների մոտ: Ֆինանսական խորհրդատուները կբացատրեն առկա ֆինանսական օժանդակության ծրագրերի պահանջները և կորոշեն, թե արդյոք հիվանդն իրավասու է ստանալ ֆինանսական օգնություն: Ֆինանսական օժանդակություն խնդրող հիվանդները պետք է լրիվ լրացնեն

Atlantic Health System-ի ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևը (այդ թվում հավաստագրման էջերը) և դիտարկման համար ներկայացնեն նշված հայտով պահանջվող այլ փաստաթղթեր: Անհրաժեշտության դեպքում տրամադրվում են թարգմանված նյութեր և բանավոր թարգմանիչներ, որպեսզի ապահովվի իմաստալից հաղորդակցությունը այն մարդկանց հետ, որոնք սահմանափակ գիտելիքներ ունեն անգլերենից:

- K. Հիվանդանոցից դուրս գրվելուց և վճարային փաստաթուղթ ստանալուց հետո՝ ապահովագրություն չունեցող հիվանդն ունի մինչև 365 օր ժամկետ՝ ֆինանսական օժանդակություն ստանալու համար լրացված դիմում-հայտ ներկայացնելու համար: Հիվանդանոցից դուրս գրվելուց և վճարային փաստաթուղթ ստանալուց հետո՝ ապահովագրություն կամ թերի ապահովագրություն ունեցող հիվանդն ունի մինչև 365 օր ժամկետ, որը ներառում է ապահովագրողի կողմից ֆինանսական օժանդակություն ստանալու համար ներկայացվող լրացված դիմում-հայտը մշակելու ժամանակը:

IV. **Ֆինանսական օժանդակության ծրագիրը.**

Atlantic Health System-ի հիվանդները կարող են հավակնել անվճար կամ գեղջված օժանդակության՝ տարբեր ծրագրերի շրջանակներում, որոնք նկարագրված են ստորև. Յուրաքանչյուր առանձին դեպքում, Atlantic Health System-ի պարտավորությունը՝ տրամադրել ֆինանսական օժանդակություն մատուցված ծառայությունների համար, կհամարվի ամբողջովին կատարված, եթե հիվանդի կամ հիվանդի ապահովագրողի վճարած գուտ գումարները (եթե այդպիսիք կան) և ցանկացած կառավարական փոխհատուցման կամ նմանատիպ ծառայությունների համար ստացված նյութական օգնության ընդհանուր գումարը հավասար լինի համախառն ֆինանսական օժանդակությանը: Atlantic Health System-ը նման գուտ գումարները կներկայացնի որպես կազմակերպության տրամադրած ֆինանսական օժանդակություն (հաշվի առնելով ինքնարժեք/ծախսեր հարաբերակցությունը այն դեպքերում, երբ ֆինանսական օժանդակությունը պատշաճ ներկայացված է ինքնարժեքով հաշվարկված հաշվետվություններում):

A. Նյու Ջերսիում գործող պետական ծրագրերը.

1. Բարեգործական օգնություն.

Այս ծրագիրը ներառում է միայն անհապաղ հիվանդանոցային օգնության, անհետաձգելի բժշկական ծառայությունների ծախսերը, որոնք ապահովագրված են Medicaid պետական ծրագրի շրջանակներում, եթե իհարկե հիվանդը Medicaid իրավասություն ունի: Ֆինանսական խորհրդատվության գրասենյակը սկզբնական լրիվ լրացված հայտը ստանալուց ոչ ուշ, քան 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում որոշում կկայացնի, թե արդյոք դիմորդն օժանդակության իրավունք ունի: Եթե հայտը թերի է (օրինակ՝ եկամուտներ/ապացուցված ակտիվներ հարցումը լրացված կամ հավաստի չէ), ապա գրավոր մերժում կուղարկվի, որում նշվելու են բացակայող փաստաթղթերը, առանց որոնց հնարավոր չէ ստանալ անհրաժեշտ թույլտվությունը: Հիվանդանոցից դուրս գրվելուց և վճարային փաստաթուղթ ստանալուց հետո՝ ապահովագրություն չունեցող դիմորդն ունի մինչև 365 օր ժամկետ, որում ներառված է ապահովագրողի կողմից Բարեգործական օգնություն ստանալու համար կրկին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ մշակելու ժամանակը: Հիվանդանոցից դուրս գրվելուց և վճարային փաստաթուղթ ստանալուց հետո՝ ապահովագրություն կամ թերի ապահովագրություն ունեցող դիմորդն ունի մինչև 365 օր ժամկետ, որում ներառված է ապահովագրողի կողմից Բարեգործական օգնություն ստանալու համար կրկին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ մշակելու ժամանակը: Բարեգործական օգնություն ստանալու իրավունք ունեցող հիվանդն անվճար կամ զեղչված աջակցություն կստանա համախառն վճարներից՝ համաձայն **Հավելված Գ-ում** շարադրված ուղեցույցների:

Ոչ իրավասու դիմորդները կարող են կրկին դիմել ապագայում, եթե ծառայությունները և նրանց ընթացիկ ֆինանսական հանգամանքները փոխոխվել են:

Բարեգործական օգնությունը պետական ծրագիր է, որի շահառուները կարող են լինել Նյու Ջերսիի ստորև բնակիչները.

- a. Բժշկական ապահովագրություն չունեցող կամ հիվանդանոցային ծախսերի միայն մասնակի վճարման բժշկական ապահովագրություն ունեցող անձիք;

- b. Մասնավոր կամ պետական ապահովագրության իրավունք ունենեցող անձիք (օրինակ՝ Մոցիալական ապահովություն (թոշակներ և հաշմանդամության) նպաստառուները, Լրացուցիչ ապահովություն եկամուտ (SSI) ստացողները՝ Medicaid համատեղությամբ, կամ Medicaid շահառուները), և
- c. Պետության սահմանված ինչպես եկամուտների, այնպես էլ ակտիվների չափանիշներին համապատասխանող անձիք:

Բարեգործական օգնություն ստանալու իրավունքի համար լրացուցիչ չափանիշներ են կիրառվում.

- a. Հիվանդները դասակարգվում են Բարեգործական օգնության ծրագրով, որը ներառում է (i) 100% ծախսերի փոխհատուցում այն հիվանդներին, որոնց ընտանիքի համախառն եկամուտը հավասար կամ ցածր է դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի 200% մեծությունից; և (II) ծախսերի մասնակի փոխհատուցում այն հիվանդներին, որոնց ընտանիքի համախառն եկամուտը գերազանցում է դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի 200%-ը, սակայն հավասար կամ քիչ է այդ մակարդակի 300%-ի ցուցանիշից՝ համաձայն **Հավելված Գ-ի** ուղեցույցների:
- b. Բարեգործական օգնության իրավունք ունենալու համար ակտիվների անհատական սահմանաչափը \$7 500 է և ընտանեկան ակտիվների սահմանաչափը \$15 000 է: Համաձայն N.J.A.C. 10:52-11.8(ա) բաժնի ընտանիքի անդամների ակտիվները հաշվի առնելու պահանջի, դրանք կհաշվարկվեն հետևյալ կերպ. Չափահաս դիմորդի ընտանիքի կազմը ներառում է դիմորդին, նրա կնոջը/ամուսնուն, նրա խնամքի տակ գտնվող անչափահաս երեխաներին և ծնողներին, որոնց համար դիմորդը պատասխանատվություն է կրում: Անչափահասի ընտանիքի կազմը ներառում է երկու ծնողներին, ծնողի կնոջը/ամուսնուն, անչափահաս եղբայր/քույրերին և ծնողների խնամակալության տակ գտնվող մեծահասակներին, որոնց համար ծնող(ներ)ը պատասխանատվություն են կրում: Եթե դիմորդի ներկացրած փաստաթղթերից հետևում է, որ ամուսիններից կամ ծնողներից մեկը համատեղ կյանք չի վարում դիմորդի հետ, ապա այդ կինը/ամուսինը կամ ծնողը չպետք է դիտարկվեն որպես ընտանիքի անդամ: Հղի կինը համարվում է ընտանիքի 2 անդամ:

Համաձայն N.J.A.C. 10:52 բաժնի Հիվանդանոցային ծառայությունների մատուցման ձեռնարկի Բարեգործական օգնությանը վերաբերող պահանջների, անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներառել

- a. Հիվանդի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող վավեր փաստաթղթերը: Դրանք են ստորև նշված փաստաթղթերից որևէ մեկը. վարորդական իրավունքի վկայականը, սոցիալական ապահովագրության քարտը, օտարերկրացու կացության քարտը, ծննդյան վկայականը, աշխատավարձային վճարումների քաղվածքը, անձնագիրը, վիզան և այլն:
- b. Ծառայությունների մատուցման ամսաթվի դրությամբ Նյու Ջերսիում բնակվելու ապացույցը (նշում. որոշ դեպքերում, անհետաձգելի բուժօգնությունը բացառություն է անում բնակիչ լինելու պահանջի համար): Դրանք են ստորև նշված փաստաթղթերից որևէ մեկը. վարորդական իրավունքի վկայականը, ընտրողի գրանցման քարտը, միության անդամության տոմսը, ապահովագրության կամ սոցիալական ծրագրերի վկայականը, ուսանողական վկայականը, կոմունալ ծախսերի վճարման անդորրագիրը, դաշնային եկամտահարկի հայտարարագիրը, պետական եկամտահարկի հայտարարագիրը կամ գործազրկության նպաստների վճարման հայտարարագիրը:
- c. Համախառն եկամտի մեծության ապացույցներ: Սա պետք է ներառի տվյալներ, որոնք անհրաժեշտ են հիվանդանոցին՝ հիվանդի համախառն եկամտի մեծությունը որոշելու համար (ստորև նշվածներից որևէ մեկը).
 - i. Փաստացի համախառն եկամուտը վերջին 12 ամիսների ընթացքում՝ նախքան ծառայությունների մատուցումը:
 - ii. Փաստացի համախառն եկամուտը վերջին 3 ամիսների ընթացքում՝ նախքան ծառայությունների մատուցումը:
 - iii. Փաստացի համախառն եկամուտը վերջին մեկ ամսվա ընթացքում՝ նախքան ծառայությունների մատուցումը:
- d. Ծառայությունների մատուցման ամսաթվի դրությամբ առկա հավաստի ակտիվները: Սրանք այն ակտիվներն են, որոնք կարող են արագ կանխիկ դրամական միջոցների վերածվել, օրինակ՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, կենսաթոշակային ժառանգության իրավունքի, ավանդային հավաստագրերը, ընթացիկ և խնայողական հաշիվների անկանխիկ միջոցները կամ

գլխավոր կացարանից բացի, սեփականության իրավունքով տիրապետվող այլ անշարժ գույքը:

2. Ձեռչված արտոնյալ խնամքի իրավունք՝ համաձայն N.J.S.A. 26:2H-12.52 օրենքի:

Նյու Ջերսիի բնակիչ, ապահովագրություն չունեցող հիվանդները, որոնց ընտանիքի համախառն եկամուտը ցածր է դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի 500% - մեծությունից, զեղչված խնամք ստանալու արտոնյալ իրավունք ունեն, համաձայն ՖՕՔ Բաժին IV.C.-ի: Բարեգործական օգնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք նշված են Բաժին Ա.1.-ում, դիտարկվում են իրավասությունը որոշելու չափանիշներին համապատասխան, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատական և ընտանեկան գույքային շեմերը չպետք է կիրառվեն զեղչված արտոնյալ խնամք ստանալու իրավասությունը որոշելու հարցում:

3. Ծանր հիվանդությունների ծրագիր Մանկական բարեգործական հիմնադրամի շրջանակներում.

Նյու Ջերսիի Ծանր հիվանդությունների պետական ծրագիրը Մանկական բարեգործական հիմնադրամի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ծանր հիվանդություն ունեցող երեխաների ընտանիքներին: Իրավասության, վճարվող ծախսերի և աջակցություն ստանալու համար դիմում ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ <http://www.state.nj.us/humanservices/cicrf/home/> կայքէջից:

4. Նյու Ջերսիի հանցագործության զոհերի փոխհատուցման գրասենյակը

Նյու Ջերսիի նահանգը հիմնել է Նյու Ջերսիի հանցագործության զոհերի փոխհատուցման գրասենյակ, որպեսզի նյութական աջակցություն ցուցաբերի հանցագործության զոհերին, կիսի նրանց վնասներն ու ծախսերը, այդ թվում՝ փոխհատուցի որոշակի հանցավոր գործողությունների հետևանքով առաջացած բուժական ծախսերը: Իրավասության, վճարվող ծախսերի և աջակցություն ստանալու համար դիմում ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ <http://www.nj.gov/oag/njvictims/application.html> կայքէջից:

B. Ինքնաֆինանսավորում.

1. Նյու Ջերսիի բնակիչներ

Ապահովագրություն չունեցող հիվանդներից, որոնք չեն կարող հավակնել բարեգործական օգնություն կամ ցանկացած այլ տեսակի դաշնային կամ պետական ֆինանսական օժանդակություն ստանալու ծրագրերին, վճարումները գանձվելու են հետևյալ կերպ.

- i. Ստացոնար հիվանդներ. Բժշկի ցուցումով ստացիոնար բուժում ստացող հիվանդները կվճարեն Medicare բժշկական օգնության համապատասխան DRG դրույքաչափը՝ գումարած մատուցված ծառայությունների արժեքի 15%-ը:
- ii. Ամբուլատոր հիվանդներ. Morristown Medical Center և Overlook Medical Center բժշկական կենտրոններում ամբուլատոր բուժում ստացող հիվանդները կվճարեն հիվանդանոցային ծախսերը 40% զեղչի չափով: Newton Medical Center բժշկական կենտրոնի հիվանդները ստանում են 88% զեղչ, Chilton Medical Center բժշկական կենտրոնի ամբուլատոր հիվանդները՝ 82.4% զեղչ, իսկ Hackettstown Medical Center բժշկական կենտրոնի ամբուլատոր հիվանդները՝ 89% զեղչ:

2. Այլ նահանգի և օտարերկրացի հիվանդներ

- a. Ստացոնար հիվանդներ. Բժշկի ցուցումով ստացիոնար բուժում ստացող հիվանդները կվճարեն Medicare բժշկական օգնության համապատասխան DRG դրույքաչափը՝ գումարած մատուցված ծառայությունների արժեքի 25%-ը:
- b. Ամբուլատոր հիվանդներ. Morristown Medical Center և Overlook Medical Center բժշկական կենտրոններում ամբուլատոր բուժում ստացող հիվանդները կվճարեն հիվանդանոցային ծախսերը 40% զեղչի չափով: Newton Medical Center բժշկական կենտրոնի հիվանդները ստանում են 88% զեղչ, Chilton Medical Center բժշկական կենտրոնի ամբուլատոր հիվանդները՝ 82.4% զեղչ, իսկ Hackettstown Medical Center բժշկական կենտրոնի ամբուլատոր հիվանդները՝ 89% զեղչ:

C. Հիմնական գանձվող գումարներ (ՀԳԳ)

Նյու Ջերսիի բնակիչ, ապահովագրություն չունեցող հիվանդները, որոնց ընտանիքի համախառն եկամուտը ցածր է դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի 500% մեծությունից, որոնք չեն

համապատասխանում դաշնային կամ պետական ֆինանսական
օժանդակություն ստանալու ծրագրերին (բացառությամբ Բարեգործական
օգնությանը), կունենան գեղջ իրենց հաշվից, համաձայն Բաժին IV-ի:
Ֆինանսական օժանդակություն ստանալու հայտ ներկայացնելու դեպքում
ֆինանսական օգնություն և հիվանդի՝ աջակցության իրավունք ստանալու
որոշումը սույն բաժնի շրջանակներում, կվճարեն ավելի քիչ ՀԳԳ կամ
համապատասխան Medicare դրույքաչափին գումարած 15 տոկոս:

Atlantic Health System-ը յուրաքանչյուր ստորև բժշկական
հաստատությունում որոշել է օգտվել վերստուգման մեթոդից. ՀԳԳ
տոկոսները (ըստ բժշկական հաստատության).

Morristown Medical Center բժշկական կենտրոն. 25.5%
Overlook Medical Center բժշկական կենտրոն. 26.4%
Chilton Medical Center բժշկական կենտրոն. 19.4%
Newton Medical Center բժշկական կենտրոն. 13.5%
Hackettstown Medical Center բժշկական կենտրոն 17.8%

Համաձայն Պետական Եկամուտների Օրենքի Գլուխ 501(r)-ի պահանջների,
յուրաքանչյուր բժշկական հաստատություն համապատասխան ՀԳԳ տոկոսը
հաշվարկելիս պետք է օգտվի Վերահսկման մեթոդից: ՀԳԳ տոկոսները
հաշվարկվում են՝ 12-ամսյա ժամանակահատվածում բոլոր թույլատրված
պահանջների մեծությունը բաժանելով այդ պահանջներին առնչվող
համախառն ծախսերի մեծության վրա: Հիվանդանոցային
հաստատությունների համար, որպես ուղեցույց, ստորև վճարային
համախումբն է ընտրվել. Medicare սպասարկման վճար + բոլոր մասնավոր
բժշկական ապահովագրական ընկերությունների վճարները:

ՀԳԳ տոկոսները վերահաշվարկվում են ամեն տարի՝ հիմք ընդունելով
օրացույցային տարվա վերջին հարյուր քսան (120) օրվա
ժամանակահատվածը: Եթե հաշվարկված ՀԳԳ տոկոսները արդյունքում **քիչ
են**, քան հիվանդի պարտավորության գումարը, ապա հիվանդը պետք է
վճարի միայն հաշվարկված ՀԳԳ տոկոսների գումարը:

Եթե հաշվարկված ՀԳԳ տոկոսները արդյունքում **շատ են**, քան հիվանդի
պարտավորության գումարը, ապա հիվանդը պետք է վճարի միայն վերը
նշված ֆինանսական օժանդակության ծրագրերով հաշվարկված գումարը:

V. Հաշիվների ներկայացման և վճարումների հավաքագրման քաղաքականությունը

Այս Բաժնում սահմանում է հաշիվների ներկայացման և վճարումների հավաքագրման քաղաքականությունը և Atlantic Health System-ի ընթացակարգերը, ինչպես նաև նկարագրում են այն գործողությունները, որոնք կարող են կիրառվել, եթե մատուցված բժշկական ծառայությունների հաշիվը, այդ թվում՝ ֆինանսական օժանդակության գեղչերից հետո գոյացած հաշվի մնացորդը, չի վճարվում: Սույն ՖՕՔ-ի պատճեն կտրվի Atlantic Health System-ի անունից գործող պարտքերի հավաքագրման գործակալություններին և փաստաբաններին:

Յուրաքանչյուր վճարային հաշիվ պետք է պարունակի նկատելի գրառում առկա ֆինանսական օժանդակության մասին, նշելով կոնկրետ բժշկական հաստատության ֆինանսական խորհրդատվության գրասենյակի հեռախոսահամարը, որից հիվանդը կարող է տեղեկատվություն ստանալ ՖՕՔ և ֆինանսական օժանդակության դիմում-հայտ ներկայացնելու մասին: Վճարային հաշիվը պետք է պարունակի նաև կայքէջի հասցեն, որտեղից կարելի է ներբեռնել ՖՕՔ պատճենները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները:

- A. Ծանուցման ժամկետները. Հիվանդի բնականոն վիճակի վերականգնումից հետո, Atlantic Health System-ը հաշիվ կներկայացնի նրան որևէ չմարված պարտավորության վերաբերյալ: Հիվանդանոցից դուրս գրվելուց և առաջին վճարային փաստաթուղթը ստանալուց հետո, ապահովագրություն չունեցող հիվանդները կունենան 120-օրյա ժամկետ՝ որի ընթացքում Վճարումների հավաքագրման որևիցե արտակարգ գործողություն (ՎՀԱԳ՝ նկարագրված է ստորև) չի ձեռնարկվի հիվանդի նկատմամբ: Հիվանդանոցից դուրս գրվելուց և առաջին վճարային փաստաթուղթը ապահովագրողի կողմից ստանալուց հետո՝ ապահովագրություն կամ թերի ապահովագրություն ունեցող հիվանդը կունենան 120-օրյա ժամկետ՝ որի ընթացքում որևիցե ՎՀԱԳ չի ձեռնարկվի նրա նկատմամբ: (120-օրյա ժամկետի ծանուցում):
- B. Եթե հիվանդն ունի ժամկետանց վճարում, ապա նա կծանուցվի այդ մասին և նրան կառաջարկվի քննարկել վճարային փաստաթուղթը՝ որոշելու համար, թե արդյոք ֆինանսական օժանդակություն է անհրաժեշտ, թե նոր կամ վերանայված վճարային փաստաթուղթ պետք է կազմել: Atlantic Health System-ը կարող է հոգալ հիվանդների տեղավորման հարցերը, եթե նրանք դիմեն և վճարման մասին պայմանվորվածություն ձեռք բերեն:
- C. Եթե 120-օրյա ժամկետի ծանուցումից հետո վճարում չի կատարվել և հիվանդը չի դիմել ֆինանսական օժանդակություն ստանալու համար, պայմանվորվածություն ձեռք չի բերել հիվանդանոցի ֆինանսական խորհրդատվության կամ Հաճախորդների սպասարկման գրասենյակի հետ վճարային պարտավորությունների փոփոխության մասին, ապա հիվանդի

վճարային հաշիվը կփոխանցվի վճարումների հավաքագրման հարկադիր ծառայությանը: Atlantic Health System-ը հիվանդին գրավոր կտեղեկացնի, որ հիվանդի վճարային հաշիվը կփոխանցվի հարկադիր ծառայությանը, եթե վճարում չկատարվի 10-օրյա ժամկետում (Վերջին նախազգուշացում): Վերջին նախազգուշացման ծանուցումը հիվանդին պետք է տեղեկացնի, որ ֆինանսական օժանդակությունը հասանելի է իրավասու հիվանդներին՝ նշելով կոնկրետ բժշկական հաստատության ֆինանսական խորհրդատվության գրասենյակի հեռախոսահամարը, որից հիվանդը կարող է տեղեկատվություն ստանալ ՖՕՔ և ֆինանսական օժանդակության ծրագրի մասին: Վճարային հաշիվը պետք է պարունակի նաև կայքէջի հասցեն, որտեղից կարելի է ներբեռնել ՖՕՔ պատճենները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ները:

D. Atlantic Health System-ը կարող է թույլատրել իր անունից գործող պարտքերի հավաքագրման գործակալություններին և փաստաբաններին Atlantic Health System-ի (Երրորդ կողմ) նախաձեռնել ՎՀԱԳ գործողություններ՝ հիվանդի 120-օրյա ծանուցմամբ ժամկետանց վճարային հաշիվները բռնագանձելու համար: Երբ վճարային հաշիվը փոխանցվել է Երրորդ կողմին, ապա այն պետք է հաստատի, որ գործադրվել են բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի որոշվի, թե արդյոք հիվանդը ՖՕՔ-ի համաձայն ֆինանսական օժանդակություն ստանալու իրավունք ունի և մինչ ՎՀԱԳ գործողություններ նախաձեռնելը, ձեռնարկվել են հետևյալ միջոցները.

1. Հիվանդին ուղարկվել է գրավոր ծանուցագիր (այսուհետ՝ 30-օրյա ծանուցագիր նամակ), որը (ա) ցույց է տալիս, որ հիվանդները ֆինանսական օժանդակություն ստանալու իրավունք ունեն; (բ) նկարագրում է ՎՀԱԳ գործողությունները, որոնք կարող է կիրառել Երրորդ անձը՝ վճարումը գանձելու համար; (գ) նշվի այն վերջնաժամկետը, որից հետո նման ՎՀԱԳ գործողությունները կարող են կիրառվել (կիրառության ժամկետը ուժի մեջ է մտնում ծանուցման ամսաթվից առնվազն 30 օր հետո):
2. 30-օրյա ծանուցագիր նամակի ձևը կցված է ՖՕՔ-ի Պարզ լեզվով ամփոփագրին; և
3. Atlantic Health System-ը և/կամ Երրորդ կողմը պետք է գործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի հիվանդին բանավոր տեղեկացնեն ՖՕՔ-ի և ֆինանսական օժանդակության ծրագրերի մասին:

E. Բոլոր ողջամիտ ջանքերը գործադրելուց հետո, որպեսզի որոշվի, թե արդյոք հիվանդը ՖՕՔ-ի համաձայն ֆինանսական օժանդակություն ստանալու իրավունք ունի, Երրորդ կողմը վճարումը գանձելու համար կարող է հիվանդի նկատմամբ հետևյալ ՎՀԱԳ գործողությունները կիրառել.

1. Իրավապահ կամ դատական մարմինների, այդ թվում, սակայն չսահմանափակված, ստորև գործողությունները.
 - a. Հիվանդի սեփականության վրա կալանքի կիրառում, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են I.R.C. օրենքի Գլուխ 501(r) հոդվածով;
 - b. Հիվանդի բանկային հաշիվների հսկողություն կամ սառեցում;
 - c. Հիվանդի նկատմամբ քաղաքացիական հայցի ներկայացում;
 - d. Հիվանդի աշխատավարձից պահումների իրականացում;

 2. ՎՀԱԳ-ները չեն կարող ներառել դատական ակտերով մարմնական վնասվածքներ ստանալու որոշմամբ ստացված եկամուտների սառեցումը, կատարված վերջնահաշվարկի կամ համաձայնեցված փոխզիջումային, ինչպես նաև սնանկության դեպքում հայտարարագրված գումարները:
- F. Եթե ֆինանսական օժանդակություն ստանալու համար թերի դիմում-հայտ է ներկայացվում, Atlantic Health System-ը հիվանդին պետք է գրավոր ծանուցի պահանջվող լրացուցիչ տեղեկատվության կամ փաստաթղթերի մասին, որոնք անհրաժեշտ են ՀՕՖ-իրավասության որոշումը կայացնելու համար: Atlantic Health System-ը պետք է տեղեկացնի Երրորդ կողմին, որը ֆինանսական օժանդակություն ստանալու թերի դիմում-հայտ է ներկայացվել և Երրորդ կողմը պետք է 30-օրյա ժամկետով կասեցնի բուժօգնության վճարումների գանձմանն ուղղված բոլոր ՎՀԱԳ գործընթացները:
- G. Ֆինանսական օժանդակության լրիվ լրացված դիմում-հայտ ստանալու դեպքում, Atlantic Health System-ը պետք է երաշխավորի հետևյալ գործողությունների կատարումը.
1. ՎՀԱԳ գործընթացները հիվանդի նկատմամբ պետք է դադարեցվեն;
 2. Իրավասության որոշում կկայացվի և պետք է ժամանակին կազմվեն անհրաժեշտ փաստաթղթերը;
 3. Atlantic Health System-ը պետք է գրավոր տեղեկացնի հիվանդին ընդունված որոշման և դրա հիմքերի մասին;
 4. ՀՕՖ-իրավունք ունեցող հիվանդին (եթե կիրառելի է) նոր վճարային հաշիվ կներկայացվի՝ նշելով վճարային պարտավորության գումարը, դրա հաշվարկման մանրամասները և կիրառելի ՀԳԳ տոկոսների գումարը:

5. ՀՕՖ-իրավունք ունեցող հիվանդի վճարային պարտավորության գումարը գերազանցող ցանկացած հավելվածար պետք է ամբողջովին վերադարձվի (եթե կիրառելի է); և
6. Երրորդ կողմը պետք է բոլոր ողջամիտ ջանքերը գործադրի, որպեսզի հիվանդների նկատմամբ պարտքի բռնագանձման բոլոր ՎՀԱԳ գործողությունները կասեցվեն, օրինակ՝ ազատի դատական ակտի գործողությունից կամ բռնագանձումներից ու գրավներից:

Ի. Եթե հիվանդանոցային հաստատություններից որևէ մեկը ենթադրյալ իրավասության որոշում է կայացնում, ապա անհրաժեշտ է կատարել հետևյալը.

1. Եթե հիվանդը ՀՕՖ օգնություն ստանալու ենթադրյալ իրավասություն է ձեռք բերում ավելի քիչ, քան նախատեսված է առավելագույն ծառայություններով, ապա Atlantic Health System-ը պետք է
 - a. Հիվանդին տեղեկացնի ՀՕՖ օգնություն ստանալու ենթադրյալ իրավասության հիմնավորումների վերաբերյալ և բացատրի, թե ինչպես պետք է դիմել առավել օգնություն ստանալու համար;
 - b. Հիվանդին ողջամիտ ժամանակ տրամադրի, որպեսզի վերջինս առավել օգնություն ստանալու համար դիմում ներկայացնելու հնարավորություն ունենա՝ նախքան ՎՀԱԳ գործողություններով զեղչված հաշվարկային գումարները գանձելու արտոնություն տալը;
 - c. Կրկին որոշի հիվանդի ՀՕՖ օգնություն ստանալու կարգավիճակը՝ լրիվ լրացված ֆինանսական օժանդակության դիմում-հայտը ստանալու պարագայում:

Գրականություն.

Internal Revenue Service, 26 CFR Parts 1, 53, and 602, Additional Requirements for Charitable Hospitals; Community Health Needs Assessments for Charitable Hospitals; Requirement of a Section 4959 Excise Tax Return and Time for Filing the Return; Final Rule; N.J.S.A. 26:2H-12.52; N.J.A.C. 10:52

Բրայան Գրեգնոլաստի, Նախագահ/գործադիր տնօրեն
Atlantic Health System, Inc. Էջ 10-ը 13-ից

Ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Atlantic Health System, Inc. (հետագայում՝ Atlantic Health System) ընկերության Ֆինանսական օժանդակության քաղաքականությունը (հետագայում՝ ՖՕՔ) կիրառվում է շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնություն տրամադրվող Atlantic Health System-ի հիվանդանոցի կամ ամբուլատոր-բժշկական ծառայություններ մատուցող հաստատության տարածքում, որը վճարվում է Atlantic Health System ընկերության AHS Hospital Corp. դուստր ձեռնարկությամբ:

Ստացիոնար բժշկական ծառայությունների համար, ՀՕՖ-ը պետք է դիմի շտապ կամ այլ անհետաձգելի բուժական օգնության ծառայություններ մատուցվող Atlantic Health System-ի հիվանդանոցի Practice Associates Medical Group, P.A. d/b/a Atlantic Medical Group (“AMG”) բժիշկներին: ՀՕՖ չի կարող դիմել AMG հիվանդանոցի տարածքից դուրս Atlantic Health System-ի բժիշկների ցուցաբերած մասնագիտական ծառայությունների հաշիվները վճարելու համար:

ATLANTIC HEALTH SYSTEM-Ի ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՍԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՁԵՐ ԽՆԱՄՔԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՅԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ: ԵԹԵ ԱՅՍ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ ԿՈՆԿՐԵՏ ՆՇՎԱԾ ՉԵՆ ՎԵՐԵՎԻ ՑԱՆԿՈՒՄ, ԱՊԱ ՆՐԱՆՔ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԸՆԴԳՐԿՎԵԼ ATLANTIC HEALTH SYSTEM-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕՏԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ԱՅՂ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ ՁԵԶ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՇԻՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԵՎ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵՔ:

Այս Մատակարարների ցանկը, անհրաժեշտության դեպքում, վերանայվում և թարմացվում է եռամսյակը մեկ պարբերությամբ: ՖՕՔ-ի կամ այս մատակարարների ցանկի վերաբերյալ հարցերի դեպքում զանգահարեք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-619-4024 հեռախոսահամարով:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՖՕԲ-ի թարգմանությունները, ֆինանսական օժանդակության դիմում-հայտի ձևերը և ՊԼԱ-ներն առկա են անգլերենով և հետևյալ լեզուներով.

Արաբերեն

Հայերեն

Չինարեն

Կրեոլական ֆրանսերեն

Հունարեն

Գուջարաթի

Հինդի

Իտալերեն

Ճապոներեն

Կորերեն

Լեհերեն

Պորտուգալերեն

Ռուսերեն

Սերբո-խորվաթերեն

Իսպաներեն

Տազալոզ

**ԵԿԱՍՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԵՂՉՎԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուժի մեջ է՝ 2020 թ. մարտի 17-ից

Հիվանդը պետք է համապատասխանի եկամտի և ակտիվների երկու չափանիշներին միաժամանակ

ԵԿԱՍՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հիվանդի կողմից վճարվող ծախսի գումարը՝ արտահայտված տոկոսներով, երբ Տարեկան համախառն եկամուտի մեծությունը գտնվում է հետևյալ միջակայքում.

	Հիվանդը վճարում է ծախսերի 0% -ի չափով	Հիվանդը վճարում է ծախսերի 20% -ի չափով	Հիվանդը վճարում է ծախսերի 40% -ի չափով	Հիվանդը վճարում է ծախսերի 60% -ի չափով	Հիվանդը վճարում է ծախսերի 80% -ի չափով	Հիվանդը վճարում է ծախսերի 100% -ի չափով
Ընտանեկան կազմը	<=200%	>200<=225%	>225<=250%	>250<=275%	>275<=300%	>300%
1	\$25,520 կամ քիչ	\$25,521 մինչև \$28,710	\$28,711 մինչև \$31,900	\$31,901 մինչև \$35,090	\$35,091 մինչև \$38,280	\$38,281 կամ ավելի
2	\$34,480 կամ քիչ	\$34,481 մինչև \$38,790	\$38,791 մինչև \$43,100	\$43,101 մինչև \$47,410	\$47,411 մինչև \$51,720	\$51,721 կամ ավելի
3	\$43,440 կամ քիչ	\$43,441 մինչև \$48,870	\$48,871 մինչև \$54,300	\$54,301 մինչև \$59,730	\$59,731 մինչև \$65,160	\$65,161 կամ ավելի
4	\$52,400 կամ քիչ	\$52,401 մինչև \$58,950	\$58,951 մինչև \$65,500	\$65,501 մինչև \$72,050	\$72,051 մինչև \$78,600	\$78,601 կամ ավելի
5	\$61,360 կամ քիչ	\$61,361 մինչև \$69,030	\$69,031 մինչև \$76,700	\$76,701 մինչև \$84,370	\$84,371 մինչև \$92,040	\$92,041 կամ ավելի
6	\$70,320 կամ քիչ	\$70,321 մինչև \$79,110	\$79,111 մինչև \$87,900	\$87,901 մինչև \$96,690	\$96,691 մինչև \$105,480	\$105,481 կամ ավելի
7	\$79,280	\$79,281 մինչև	\$89,191 մինչև	\$99,101 մինչև	\$109,011 մինչև	\$118,921

	կամ քիչ	\$89,190	\$99,100	\$109,010	\$118,920	կամ ավելի
8	\$88,240 կամ քիչ	\$88,241 մինչև \$ 99,270	\$99,271 մինչև \$110,300	\$110,301 մինչև \$121,330	\$121,331 մինչև \$132,360	\$132,361 կամ ավելի

Ավելի քան 8 անդամներից բաղկացած ընտանիքների համար, յուրաքանչյուր սյունակի ընտանիքի յուրաքանչյուր լրացուցիչ անդամի առավելագույն գումարին պետք է ավելացնել հետևյալ գումարը`

	\$8,960	\$10,080	\$11,200	\$12,320	\$13,440
--	---------	----------	----------	----------	----------

* Հղի կինը համարվում է ընտանիքի 2 անդամ:

Եթե 20%-ից 80% եկամուտների սանդղակով միջակայքի հիվանդները վճարովի մասնագիտական ծառայություններ ստանալու համար իրենց գրպանից բժշկական ծախսերի վճարում են կատարել (այսինքն` ոչ այլ կողմի վճարած հաշիվը), որոնց ընդհանուր գումարը գերազանցում է նրանց տարեկան համախառն եկամուտի 30%-ը, ապա այդ 30%-ը գերազանցող մնացորդային գումարը փոխհատուցվում է հիվանդանոցային ծախսերի օժանդակության ծրագրով (Բարեգործական օգնություն):

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Անհատական ակտիվների մեծությունը չի կարող գերազանցել \$7 500-ը, իսկ ընտանիքի ակտիվները չեն կարող գերազանցել \$15,000 սահմանաչափը:

Մարտի 2020